

Հրատարակվում է

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՄԲ

SPONSORED BY
THE COUNCIL OF EUROPE

ASSOCIATION OF JUDGES OF THE REPUBLIC OF ARMENIA

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS

COLLECTION OF JUDGMENTS

Edited by Alvina Gyulumyan

Member of the Constitutional Court of the Republic of Armenia,

President of the Association of Judges of the RA

YEREVAN 2002

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ**

ՎՃԻՌՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀՀ սահմանադրական դատարանի անդամ,
ՀՀ Դատավորների միության նախագահ
Ալվինա Գյուլումյանի ընդհանուր խմբագրությամբ

ԵՐԵՎԱՆ 2002

**Տպագրվում է ՀՀ Ռատավորների միության
խորհրդի որոշմամբ**

Խմբագիր

**ՀՀ սահմանադրական դատարանի
աշխատակազմի գլխավոր մասնագետ
Լիանա Հակոբյան**

Վճիռներն անգլերենից թարգմանել են.

Լուսինե Պողոսյանը
Մարինա Մխիթարյանը
Կարինե Բալայանը
Սոնա Հովհաննիսյանը
Վահե Ենգիբարյանը
Աննա Ղազարյանը

ՈՐՈՇՈՒՄ

Վլաստիմիր և Բորկա Բանկովիչները, ժիվանա Ստոյանովիչը, Միրժանա Ստոյնենովսկին, Դրագանա ժոկսիմովիչը և Դրագան Սուկովիչն

ընդդեմ

**Բելգիայի, Չեխիայի Հանրապետության,
Դանիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի,
Հունաստանի, Հունգարիայի, Իսլանդիայի,
Իտալիայի, Լյուքսեմբուրգի, Նիդեռլանդների,
Նորվեգիայի, Լեհաստանի, Իսպանիայի,
Պորտուգալիայի, Թուրքիայի և Միացյալ
Թագավորության**

Գանգատ թիվ 52207/ 99

Ընդունելիության վերաբերյալ

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, նիստ գումարելով որպես Մեծ Պալատ, հետևյալ կազմով՝ պրն Վիլհիաբեր, Նախագահ, տկն Է. Պալմ, պրն Կ.Լ.Ռոզակիս, պրն Գ.Ռես, պրն Ժ.-Պ.Կոստա, պրն Գաուկուր Ջորունդսոն, պրն Լ.Կաֆլիշ, պրն Պ.Քուրիս, պրն Ի.Քաբրալ Բարետո, պրն Ռ.Թուրմեն, տկն Վ.Ստրագնիչկա, պրն Ս. Բիրսան, պրն Ջ.Կասադևալ, պրն Ժ.Յեդիգան, տկն Վ.Թոմասեն, պրն Ա.Բ.Բակա, պրն Կ.Թրաժայ, դատավորներ,

և պրն Փ.Ջ.Մահոնեյը, Քարտուղար, ելնելով 1999թ. հոկտեմբերի 20-ին ներկայացված և 1999թ. հոկտեմբերի 28-ին գրանցված վերոհիշյալ գանգատից, ելնելով 2000թ. նոյեմբերի 14-ի որոշումից, ըստ որի Առաջին բաժանմունքի պալատը, որտեղ սկզբնապես նշանակված էր գործի քննությունը, զիջել է իր ընդդատությունը Մեծ պալատին (Կոնվենցիայի 30-րդ հոդված),

ելնելով պատասխանող Կառավարությունների ներկայացրած բացատրություններից և դրանց ի պատասխան՝ դիմողների բացատրություններից, ելնելով կողմերի՝ 2001թ. հոկտեմբերի 24-ի բանավոր բացատրություններից և ի պատասխան դատավորների հարցերի՝ նրանց հետագա բանավոր բացատրություններից. խորհրդակցելով 2001թ. հոկտեմբերի 24-ին և դեկտեմբերի 12-ին, որոշեց հետևյալը:

Փաստերը

1. Բոլոր դիմողները Հարավսլավիայի Դաշնային Հանրապետության («ՀԴՀ») քաղաքացիներ են: Առաջին և երկրորդ դիմողները՝ Վլաստիմիր և Բորկա Բանկովիչները, ծնված համապատասխանաբար՝ 1942թ. և 1945թ., Դատարան են դիմել իրենց և իրենց վախճանված դստեր՝ Բսենիա Բանկովիչի անունից: Երրորդ դիմողը՝ Ժիվանա Ստոյանովիչը, ծնված՝ 1937թ., դիմել է իր և իր վախճանված որդու՝ Նեբոյաս Ստոյանովիչի անունից: Չորրորդ դիմողը՝ Միրժանա Ստոյանովսկին, դիմել է իր և իր վախճանված որդու՝ Դարկո Ստոյանովսկու անունից: Հինգերորդ դիմողը՝ Դրագանա Ժոկսիմովիչը, ծնված՝ 1956թ., դիմել է իր և իր վախճանված անունու՝ Միլան Ժոկսիմովիչի անունից: Վեցերորդ դիմողը՝ Դրագան Սուկովիչը, դիմել է իր անունից:

2. Դատարանում դիմողներին ներկայացնում էին Էսեքսում աշխատող սուլիսիտոր պրն Անթոնի Ֆիշերը, Բելգրադի Մարդու իրավունքների կենտրոնի տնօրեն պրն Վոժին Դիմիտրիչևիչը, Թավտսի համալսարանի (Մեդֆորդ, Մասաչուսեթսի նահանգ, Միացյալ Նահանգներ) միջազգային իրավունքի պրոֆեսոր պրն Հրատ Հանունը և Էսեքսի համալսարանի միջազգային իրավունքի պրոֆեսոր և փաստաբան օրդ Ֆրանսուազ Համփսոնը: Այս ներկայացուցիչները Դատարանի բանավոր լսումին ներկայացել են իրենց խորհրդականների՝ պրն Ռիք Լոուսոնի, օրդ Տատյանա Պապիցի և պրն Վլադան Ժոկսիմովիչի հետ: Երրորդ դիմողը՝ օրդ Ժիվանա Ստոյանովիչը, նույնպես ներկայացել է լսումին:

3. Դատարանում Կառավարությունները ներկայացնում էին նրանց ներկայացուցիչները: Բանավոր լսումին Կառավարություններին ներկայացնում էին՝ Միացյալ Թագավորությունը (ուն բացատրությունները տրվել են բոլոր պատասխանողների անունից)՝ Միջազգային իրավունքի պրոֆեսոր և Q.C. պրն Քրիստոֆեր Գրինվուդը, փաստաբան պրն Ջեյմս Էդին, Արտաքին գործերի և դաշնության գրասենյակի ներկայացուցիչ պրն Մարտին Իթոնը և խորհրդական պրն Մարտին Հեմինգը, Բելգիան՝ ներկայացուցչի տեղակալ պրն Ժան Լաթովերսը, Ֆրանսիան՝ փաստաբան պրն Պիեռ Բուստոքը, Գերմանիան՝ Եվրոպայի խորհրդում Գերմանիայի մշտական ներկայացուցչի տեղակալ պրն Քրիստոֆեր Բլոսենը, Հունաստանը՝ խորհրդական պրն Միշել Ապեսոսը, Հունգարիան՝ ներկայացուցիչ և համաներկայացուցիչ՝ համապատասխանաբար պրն Լիպոտ Հոլտզը և օրդ Մոնիկա Վելերը, Իտալիան՝ համաներկայացուցչի տեղակալ պրն Ֆրանչեսկո Կրիսաֆոլին, Լյուքսեմբուրգը՝ ներկայացուցիչ պրն Նիկոլաս Մաքելը, Նիդեռլանդները՝ ներկայացուցիչ օրդ Ջոլիեն Շուբինգը, Նորվեգիան՝ ներկայացուցչի Ժ.պ. պրն Ֆրոդ Էլզեսենը, Լեհաստանը՝ ներկայացուցիչ պրն Քրիստոֆ Դրժևիկին և փաստաբան օրդ Ռենատա Կովալսկան և Թուրքիային՝ համաներկայացուցիչ օր Դենիս Ակսայը:

Ա. Գործի հանգամանքները

4. Գործի փաստերը, ինչպես ներկայացրել են կողմերը, կարելի է ընդհանրացնել հետևյալ կերպ:

5. Պատասխանող Կառավարությունները գանգատը համարել են անընդունելի՝ անհրաժեշտ չհամարելով ներկայացնել գործի որևէ փաստ, և նշել են, որ իրենց կողմից այս կամ այն փաստը կոնկրետ չվիճարկելը չի կարող օգտագործվել իրենց դեմ: Դատարանը, գործի հանգամանքները ստորև ընդհանրացնելիս, այս կամ այն փաստը կոնկրետ վիճարկելուց հրաժարվելը մեկնաբանել է որպես դրա ընդունում ցանկացած կողմի կողմից:

1. Նախադրյալները

6. 1998թ. և 1999թ. ընթացքում՝ սերբական և Կոսովոյի ալբանական զինված ուժերի բախումը փաստաթղթերով լավ հաստատված է: Հասունացող հակամարտության, միջազգային հանրության դիվանագիտական անհաջող նախաձեռնությունների և աճող անհանգստության պայմաններում, վեց երկրների Շփման խումբը (հիմնվել է 1992թ. Լոնդոնի Կոնֆերանսում) հանդիպել է և համաձայնության եկել՝ հակամարտության կողմերի միջև բանակցություններ հրավիրելու շուրջ:

7. 1999թ. հունվարի 30-ին հետևելով իր Հյուսիս-ատլանտյան խորհրդի (“ՀԱԽ”) որոշմանը, Հյուսիս-ատլանտյան դաշինքի կազմակերպությունը (“ՆԱՏՕ”) հայտարարել է օդային հարձակում ՀԳՀ-ի տարածքի վրա՝ միջազգային հանրության պահանջներին չհամաձայնելու դեպքում: Հակամարտության կողմերի միջև բանակցությունները հաջորդաբար տեղի ունեցան 1999թ. փետրվարի 6-23-ը՝ Ռամբուեում, և 1999թ. մարտի 15-18-ը՝ Փարիզում: Արդյունքում՝ առաջարկված խաղաղության համաձայնագիրը Կոսովոյի ալբանական պատվիրակությունն ստորագրեց, բայց սերբական պատվիրակությունը՝ ոչ:

8. Համարելով, որ Կոսովոյի ճգնաժամի բանակցային, քաղաքական լուծմանը հասնելու բոլոր ջանքերն սպառված են, ՀԱԽ-ը՝ որոշել և ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղարը հայտարարել է ՀԳՀ-ի դեմ օդային հարձակման սկիզբը (Դաշնակից ուժերի գործողություն): Օդային հարձակումներն ընթացել են 1999թ. մարտի 24-ից մինչև 2003թ. հունվարի 8-ը:

2. "Radio Televizije Srbije ("RTS")-ի ռմբակոծությունը

9. Բելգրադի RTS-ի սարքավորումների միջոցով հեռարձակվում են 3 հեռուստատալիք և 4 ռադիոկայան: Հեռարձակման գլխավոր սարքավորումները գտնվում էին Տակովսկա փողոցի 3 շենքերում: Գլխավոր գործակարգավարական սենյակը գտնվում էր շենքերից մեկի առաջին հարկում և գլխավորապես կազմված էր տեխնիկական անձնակազմից:

10. 1999թ. ապրիլի 23-ին, անմիջապես մոտավորապես ժամը 14.00-ից հետո (Տակովսկա փողոցի) RTS-ի շենքերից մեկի վրա հրթիռ է արձակվել ՆԱՏՕ-ի զորքերի ինքնաթիռից: Շենքի 4 հարկերից 2-ը փլուզվել է և գլխավոր գործակարգավարական սենյակը քանդվել է:

11. Առաջին և երկրորդ դիմողների դուստրը, երրորդ և չորրորդ դիմողների որդիները և հինգերորդ դիմողի ամուսինն սպանվել էին, իսկ վեցերորդ դիմողը վիրավորվել էր, ևս տասնվեցը ծանր վիրավորվել էր RTS-ի ռմբակոծության ժամանակ: Այդ երեկո ՅՂԶ-ում հարձակման են ենթարկվել քսանչորս նշանակետ, այդ թվում երեքը՝ Բելգրադում:

3. Գործին առնչվող վարույթներն այլ միջազգային դատարաններում

12. 1999թ. ապրիլի 26-ին ՅՂԶ-ն Միացյալ ազգերի կազմակերպության («ՄԱԿ»)՝

Գլխավոր քարտուղարին հանձնել է հայտարարություն, որով ճանաչում է Արդարադատության միջազգային դատարանի («ԱՄԴ») պարտադիր իրավագործությունը: 1999թ. ապրիլի 29-ին ՅՂԶ-ն գործ է հարուցել Բելգիայի և 9 այլ պետությունների դեմ՝ Դաշնակից ուժերի գործողությանը նրանց մասնակից լինելու կապակցությամբ, և ներկայացրել է ժամանակավոր միջոցներ ձեռնարկելու պահանջ՝ ԱՄԴ-ի դատարանի կանոնակարգի 73-րդ

հողվածի համաձայն: 1999թ. հունիսի 2-ի կարգադրությամբ ԱՄԴ-ն մերժել է այդ պահանջը: Գործի մնացյալ հարցերն ընթացքի մեջ են:

13. 2000թ. հունիսին Դաշնակից ուժերի գործողությունը վերանայելու համար հիմնված Կոմիտեն զեկուցել է նախկին Հարավսլավիայի հարցերով Միջազգային քրեական դատարանի («ՀՄԲԴ») դատախազին: Հետաքննություն չի հանձնարարվել: 2000թ. հունիսի 2-ին դատախազը տեղեկացրել է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին՝ հետաքննություն չսկսելու իր որոշման մասին:

Բ. Գործին առնչվող միջազգային իրավական նյութեր

1. 1949թ. Վաշինգտոնի պայմանագիրը

14. Վաշինգտոնի պայմանագիրն ուժի մեջ է մտել 1949թ. օգոստոսի 24-ին («1949թ. պայմանագիր») և հիմնվել է մի դաշինք, որը կոչվել է Հյուսիս-ատլանտյան դաշինքի կազմակերպություն («ՆԱՏՕ»)՝ կազմված տասը եվրոպական պետություններից (Բելգիա, Ֆրանսիա, Լյուքսեմբուրգ, Նիդեռլանդներ, Միացյալ Թագավորություն, Դանիա, Իսլանդիա, Իտալիա, Նորվեգիա, Պորտուգալիա)՝ Կանադայի և Միացյալ Նահանգների հետ: Հունաստանը և Թուրքիան 1952թ. միացել են 1949թ. պայմանագրին, Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը՝ 1955թ., Իսպանիան նույնպես անդամ է դարձել 1982թ.: Այս երկրներին 1999թ. մարտի 12-ին միացել են Չեխիայի Հանրապետությունը, Հունգարիան և Լեհաստանը:

15. ՆԱՏՕ-ի հիմնական նպատակն է ապահովել իր բոլոր անդամների ազատությունն ու անվտանգությունը՝ քաղաքական և ռազմական միջոցներով՝ ՄԱԿ-ի կանոնադրության սկզբունքներին համապատասխան: Նրա գործող հիմնական սկզբունքն է՝ իր անդամների անվտանգության անձեռնմխելիության հիման վրա ինքնիշխան պետությունների միջև փոխադարձ համագործակցությունը:

1. Պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի 1969թ. կոնվենցիա («Վիեննայի 1969թ. կոնվենցիա»)

16. 1969թ. Վիեննայի կոնվենցիայի 31-րդ հոդվածը վերնագրված է «Մեկնաբանությունների ընդհանուր կանոն» և հետևյալն է .

1. Պայմանագիրը պետք է մեկնաբանվի բարեխղճորեն՝ պայմանագրի տերմիններին իրենց համատեքստում տրվող սովորական իմաստի համաձայն, և դրա խնդրի ու նպատակի լույսի ներքո:

...

2. Համատեքստի հետ մեկտեղ պետք է հաշվի առնվի՝

(բ) պայմանագրի կիրառման ցանկացած հետագա պրակտիկա, որը հաստատում է դրա մեկնաբանման վերաբերյալ Կողմերի համաձայնությունը,

(ց) Կողմերի միջև հարաբերությունների նկատմամբ կիրառելի միջազգային իրավունքի ցանկացած համապատասխան կանոն»:

17. 32-րդ հոդվածը վերնագրված է «Մեկնաբանման լրացուցիչ միջոցներ» և հետևյալն է .

«Կարելի է դիմել մեկնաբանման լրացուցիչ միջոցների, ներառյալ պայմանագրի նախապատրաստական աշխատանքը և դրա կնքման հանգամանքները՝ հաստատելու համար 31-րդ հոդվածի կիրառումից բխող իմաստը կամ որոշելու համար իմաստը, երբ 31-րդ հոդվածի համաձայն մեկնաբանումը՝

(ա) իմաստը դարձնում է երկիմաստ կամ անորոշ.

(բ) հանգեցնում է այնպիսի արդյունքի, որն ակնհայտորեն անհեթեթ է»:

18. Այս հոդվածների կապակցությամբ իր մեկնաբանություններում Միջազգային իրավունքի հանձնաժողովը նշել է, որ 31 և 32-րդ հոդվածները պետք է կիրառվեն շաղկապված, և չպետք է գործի անհաղթահարելի սահմանագիծ մեկնաբանության «ընդհանուր կանոնի» և «լրացուցիչ միջոցների» միջև: Միևնույն ժամանակ, տարբերակումն ինքնին արդարացված է, քանի որ 31-րդ հոդվածում մեկնաբանման բոլոր տարրերը վերաբերում են կողմերի միջև համաձայնությանն այն ժամանակ, երբ, կամ դրանից հետո տեքստում ստանում են աուտենտիկ արտահայտություն: Նախապատրաստական աշխատանքը չունի նույն աուտենտիկ բնույթը, «այնուամենայնիվ, այն կարող է լինել երբեմն արժեքավոր՝ լույս սփռելով տեքստում համաձայնության արտահայտման վրա» (Yrbk.ILC(1966), նույն տեղում, 219-220):

3.Կոնվենցիայի 1-ին հոդվածի նախագծման պատմությունը

19. Եվրոպայի խորհրդի խորհրդակցական համագումարի Իրավական և վարչական հարցերի կոմիտեի կողմից նախապատրաստված տեքստը նախատեսում էր, ինչը և դարձավ Կոնվենցիայի 1-ին հոդված, որ «անդամ

պետություններն իրենց տարածքներում բնակվող յուրաքանչյուր անձի համար ապահովում են այն իրավունքները...»:

Փորձագիտական միջկառավարական կոմիտեն, որը հաշվի էր առել Խորհրդակցական համագումարի կազմած նախագիծը, որոշեց «իրենց տարածքներում բնակվող յուրաքանչյուր անձի համար» ձևակերպումը փոխարինել «իրենց իրավագործության ներքո գտնվող անձանց» արտահայտությամբ: Պատճառները նշված են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի Travaux Preparatoires ժողովածուի հետևյալ հատվածում (3-րդ հատոր, էջ 260)։

«Համագումարի նախագիծը Կոնվենցիայով տրամադրվող պաշտպանությունը տարածել է մասնակից պետությունների տարածքներում բնակվող յուրաքանչյուր անձի վրա»: Կոմիտեն գտել է, որ «բնակվող» տերմինը կարող է համարվել բավականին սահմանափակող: Առկա է եղել համոզվածություն, որ կային հիմքեր Կոնվենցիայով նախատեսված պաշտպանությունը մասնակից պետությունների տարածքներում բոլոր անձանց վրա տարածելու համար, անգամ նրանց, ովքեր չեն կարող համարվել այնտեղ բնակվող՝ այդ բառի իրավական իմաստով: Այդ իսկ պատճառով Կոմիտեն «բնակվող» տերմինը փոխարինեց «իրավագործության ներքո գտնվող» բառերով, որոնք կան նաև Միացյալ ազգերի հանձնաժողովի դաշնագրի նախագծի 2-րդ հոդվածում»:

20. Մյուս համապատասխան մեկնաբանությունը՝ մինչև Կոնվենցիայի 1-ին հոդվածն ընդունելը, արվել է Բելգիայի ներկայացուցչի կողմից 1950թ. օգոստոսի 25-ին՝ Խորհրդակցական համագումարի լիազումար նիստի ժամանակ: Ըստ դրա՝ «քանի որ մեր պետությունների կողմից Կոնվենցիայի ձևական դրույթի ուժով պաշտպանության իրավունքը կարող է կիրառվել լիարժեք և առանց որևէ տարբերակման կամ զանազանության որևէ անհատի կամ թեկուզև ազգության օգտին, որը մեր պետություններից որևէ մեկի տարածքում պատճառ կունենա պնդելու, որ [իր] իրավունքները ոտնահարվել են»:

21. Travaux preparatoires-ը շարունակում է նշել, որ 1-ին հոդվածի ձևակերպումը ներառյալ «իրենց իրավագործության ներքո», չեն առաջացրել որևէ հետագա վեճ և տեքստը, ինչպես որ եղել է (և այժմ կա) ընդունվել է 1950թ. օգոստոսի 25-ին Խորհրդակցական համագումարի կողմից առանց հետագա փոփոխությունների (վերը մեջբերված ժողովածուն (հատոր 6, էջ 132):

4. Մարդու իրավունքների և պարտականությունների մասին 1948թ. ամերիկյան հռչակագիրը:

22. Այս հռչակագրի 2-րդ հոդվածում կարդում ենք.

«Բոլորը հավասար են օրենքի առջև և ունեն այս Հռչակագրով սահմանված իրավունքներ և պարտականություններ, առանց որևէ տարբերակման այնպիսի հիմքերով, ինչպիսին են ռասան, սեռը, լեզուն, դավանանքը և այլ գործոններ»:

23. Քորդի գործով (Ձեկույց թիվ 109/99, գործ թիվ 10.951, Քորդը և այլոք ընդդեմ Միացյալ Նահանգների, 1999թ. սեպտեմբերի 29, կետեր 37, 39, 41 և

43) իր զեկույցի մեջ Մարդու իրավունքների միջամերիկյան հանձնաժողովը քննել է Միացյալ Նահանգների ռազմական ուժերի կողմից Գրենադայում ռազմական գործողություններ ծավալելու առաջին օրերի ընթացքում դիմողների կալանքի, նրանց նկատմամբ վերաբերմունքի վերաբերյալ գանգատները և մեկնաբանել է.

«Քանի դեռ Ամերիկյան հռչակագրի էքստերիտորիալ կիրառումը չի դարձել Կողմերի միջև քննարկվող հարց, Հանձնաժողովը նպատակահարմար է գտել նշել, որ որոշակի հանգամանքների դեպքում էքստերիտորիալ գործողությունների նկատմամբ իր իրավագործության տարածումը պետք է ոչ միայն բխի համապատասխան նորմից, այլ պահանջվի այդ նորմով: Անձի հիմնարար իրավունքներն Ամերիկայում հռչակված են հավասարության և առանց խտրականության սկզբունքների հիման վրա՝ «առանց ռասայական, ազգային, դավանանքի կամ սեռի որևէ տարբերակման».

... Ելնելով նրանից, որ մարդն օժտված է անձնական իրավունքներով մարդկային բնույթի ուժով, յուրաքանչյուր ամերիկյան պետություն պարտավորվում է ապահովել իր իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուր անձի պաշտպանված իրավունքները:

Թեև սա առավել ընդհանուր կերպով վերաբերում է պետության տարածքում գտնվող անձանց, այն կարող է, որոշակի հանգամանքներում, վերաբերել էքստերիտորիալ գործողությունների, երբ տվյալ անձը ներկա է մի պետության տարածքում, սակայն ենթակա է մեկ այլ պետության վերահսկողության՝ սովորաբար վերջիններիս արտասահմանյան ներկայացուցիչների գործունեության միջոցով: Սկզբունքորեն, հարցը վերաբերում է ոչ թե ենթադրյալ զոհի քաղաքացիությանը կամ ներկայությանը որոշակի աշխարհագրական տարածքում, այլ արդյոք որոշակի հանգամանքներում պետությունը պահպանում է իր իրավագործությանը և վերահսկողությանը ենթակա անձի իրավունքները»:

24. 1978թ. Մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիայի 1-ին հոդվածը, որի վրա հիմնված է Մարդու իրավունքների միջամերիկյան դատարանի անկախ իրավագործությունը, համապատասխանաբար, հետևյալն է .

«Այս Կոնվենցիայի մասնակից պետությունները պարտավորվում են հարգել Կոնվենցիայով ճանաչվող իրավունքներն ու ազատությունները և իրենց իրավագործության ներքո գտնվող բոլոր անձանց համար ապահովել այս իրավունքների և ազատությունների լիարժեք իրականացումը՝ առանց որևէ խտրականության...»:

5. Պատերազմի զոհերի պաշտպանության մասին 1949թ. Ժնևի չորս կոնվենցիաները

25. Այս կոնվենցիաներից («1949թ.Ժնևի կոնվենցիաներ») յուրաքանչյուրի 1-ին հոդվածները մասնակից կողմերից պահանջում են ցանկացած

հանգամանքներում «հարգել և ապահովել հարգանք սույն կոնվենցիայի նկատմամբ»:

6.Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին 1966թ. դաշնագիրը («1966թ. ՔՔԻԴ») և դրա 1966թ. կամընտիր արձանագրությունը

26. 1966թ. ՔՔԻԴ-ի 2-րդ հոդվածի 1-ին կետը նախատեսում է.

«Սույն Դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է հարգել իր տարածքի սահմաններում և իր իրավագործության ներքո գտնվող բոլոր անձանց՝ սույն Դաշնագրով ճանաչված իրավունքները...»:

Մարդու իրավունքների հանձնաժողովը 1950թ. իր 6-րդ նստաշրջանի ընթացքում հաստատեց Դաշնագրի նախագծի 2-րդ հոդվածի 1-ին կետում «իր տարածքի սահմաններում և ենթակա իր...» բառերն ընդգրկելու առաջարկությունը: Հետագա առաջարկությունները՝ հանել այս բառերը, մերժվել են 1952թ. և 1963թ.: Հետագայում, Մարդու իրավունքների կոմիտեն հետամուտ էր զարգացնելու, որոշակի սահմանափակ համատեքստերում, մասնակից պետությունների պատասխանատվությունն իրենց արտասահմանյան ներկայացուցիչների գործունեության համար:

27. 1966թ. կամընտիր արձանագրության 1-ին հոդվածը նախատեսում է.

«Դաշնագրի մասնակից այն պետությունը, որը դառնում է սույն Արձանագրության մասնակից, ճանաչում է Կոմիտեի իրավասությունը՝ ընդունելու և քննության առնելու իր իրավագործության ներքո գտնվող առանձին անձանց հաղորդումները, ովքեր հայտարարում են, թե տվյալ մասնակից պետության կողմից Դաշնագրում նախատեսված իրավունքի խախտման գոհ են դարձել...»:

Գանգատները

28. Դիմողները գանգատվում են 1999թ. ապրիլի 23-ին ՆԱՏՕ-ի զինված ուժերի կողմից ՌՏՏ-ի շենքի ռմբակոծության դեմ և վկայակոչում են Կոնվենցիայի հետևյալ դրույթները. 2-րդ հոդվածը (կյանքի իրավունք), 10-րդ հոդվածը (արտահայտվելու իրավունք) և 13-րդ հոդվածը (արդյունավետ պաշտպանության միջոցի իրավունք):

Իրավունքի հարցեր

29. Առաջինից հինգերորդ դիմողները իրենց և իրենց մահացած մերձավոր ազգականների անունից հիմնվում են 2-րդ, 10-րդ և 13-րդ հոդվածների վրա: Վեցերորդ դիմողը, որը վիրավորվել է հարվածի հետևանքով, հիմնվում է այդ հոդվածների վրա՝ իր անունից:

Դատարանի թույլտվությամբ՝ կողմերի գրավոր և բանավոր բացատրությունները սահմանափակվել են ընդունելիությանը վերաբերող հարցերով, Կառավարությունները հետագայում ընդունել են, որ իրենք չեն վիճարկի, որ բողոքները եղել են ակնհայտորեն չհիմնավորված:

30. Ինչ վերաբերում է գործի ընդունելիությանը, դիմողները պնդել են, որ գանգատը *ratione loci* համատեղելի է Կոնվենցիայի դրույթների հետ, քանի որ պատասխանող պետությունների վիճարկվող գործողությունները, որոնք տեղի են ունեցել կամ ՀԴՀ-ում, կամ իրենց իսկ տարածքներում, բայց հետևանքներ են ունեցել ՀԴՀ-ում, իրենց և իրենց մահացած ազգականներին բերում է այդ

պետությունների իրավագործության ներքո: Նրանք նաև առաջարկել են, որ պատասխանող պետություններն առանձին վերցրած պատասխանատու են հարվածի համար, անկախ այն բանից, որ այն կատարվել է ՆԱՏՕ-ի զինված ուժերի կողմից, և որ իրենք չեն ունեցել արդյունավետ պաշտպանության միջոց՝ սպառելու համար:

31. Կառավարությունները վիճարկել են գործի ընդունելիությունը: Նրանք հիմնականում պնդել են, որ գանգատն անհամատեղելի է *ratione personae* Կոնվենցիայի դրույթների հետ, որովհետև դիմողները չեն գտնվում պատասխանող պետությունների իրավագործության ներքո՝ Կոնվենցիայի 1-ին հոդվածի իմաստով: Նրանք նաև պնդել են, որ ԱՄԴ-ի «Դրամական ոսկի սկզբունքի» համաձայն՝ այս Դատարանը չի կարող որոշել գործն ըստ էության, քանի որ այն պետք է որոշի Միացյալ Նահանգների, Կանադայի և ՆԱՏՕ-ի իրավունքներն ու պարտավորությունները, որոնցից ոչ մեկը Կոնվենցիայի Պայմանավորվող կողմ չէ, կամ, հետևաբար, սույն գանգատի կողմեր չեն (Դրամական ոսկին տեղափոխվել է Յունից 1943թ. ԱՄԴ-ի զեկույցներ, 1954թ. էջ 19, ինչպես որ կիրառվել է Արևելյան Թիմորում, ԱՄԴ-ի զեկույցներ, 1995թ. էջ 90):

32. Այնուհետև Ֆրանսիայի կառավարությունը վիճարկել է, որ ռմբակոծության համար պատասխանատու են ոչ թե պատասխանող պետությունները, այլ ՆԱՏՕ-ն՝ միջազգային իրավունակությամբ մի կազմակերպություն, որն անջատ է պատասխանող պետություններից: Թուրքիայի կառավարությունը որոշակի բացատրություններ է ներկայացրել Յուսիսային Կիպրոսի իրավիճակի վերաբերյալ իրենց տեսակետի կապակցությամբ:

33. Վերջապես, Յունգարիայի, Իտալիայի և Լեհաստանի կառավարությունները նշել են, որ դիմողներն այդ պետություններում չեն սպառել արդյունավետ պաշտպանության մատչելի միջոցները՝ ինչպես նախատեսված է Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետով:

Ա. Արդյո՞ք դիմողները և նրանց մահացած ազգականները գտնվում են պատասխանող պետությունների «իրավագործության» ներքո՝ Կոնվենցիայի 1-ին հոդվածի իմաստով

34. Սա այն գլխավոր հիմքն է, որով Կառավարությունները վիճարկում են գանգատի ընդունելիությունը, և Դատարանը պետք է նախ և առաջ որոշի այս հարցը: Կոնվենցիայի 1-ին հոդվածը նախատեսում է .

«Բարձր պայմանավորվող կողմերն իրենց իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուր անձի համար ապահովում են այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են սույն Կոնվենցիայի 1-ին բաժնում»:

1. Պատասխանող Կառավարությունների բացատրությունները

35. Կառավարությունները պնդում են, որ դիմողները և նրանց մահացած ազգականները գործին առնչվող ժամանակահատվածում չեն գտնվել պատասխանող պետությունների «իրավագործության» ներքո, և գանգատը, հետևաբար, անհամատեղելի է *ratione personae* Կոնվենցիայի դրույթների հետ:

36. Ինչ վերաբերում է «իրավագործության» ճշգրիտ իմաստին, նրանք առաջարկել են, որ այն պետք է մեկնաբանվի հանրային միջազգային իրավունքում այդ տերմինի սովորական և ճանաչված իմաստով: Այսպիսով, «իրավագործության» իրականացումն ընդգրկում է օրինական իշխանության հաստատումը կամ իրականացումը՝ փաստացի կամ փաստաթղթային, այն

անձանց նկատմամբ, ովքեր ունեն տվյալ պետության հպատակության որոշակի ձև, կամ գտնվում են այդ պետության վերահսկողության ներքո: Նրանք նաև առաջարկել են, որ «իրավագործություն» տերմինն ընդհանուր առմամբ հանգեցնում է որոշ ձևի կառուցվածքային հարաբերության, ինչը, որպես կանոն, գոյություն է ունենում որոշակի ժամանակահատվածում:

37. Նրանք պնդում են, որ իրենց այս տեսակետը հենվում է Դատարանի իրավական դիրքորոշման վրա, որն իրավագործության այս ընկալումը կիրառել է՝ հաստատելու համար, որ պատասխանող պետության տարածքից դուրս նրա գործողություններից ազդեցություն կրած որոշակի անձինք կարող են համարվել նրա իրավագործության ներքո գտնվող, որովհետև նրանց նկատմամբ իրականացվել է տվյալ պետության իրավական իշխանության որևէ ձև: Դիմողների ձեռքակալությունը և կալանավորումը պատասխանող պետության տարածքից դուրս Իսայի և Օջալանի գործերում (Իսայը և այլոք ընդդեմ Թուրքիայի (որոշում), թիվ 31821/96, 2000թ. մայիսի 30, չտպագրված, և Օջալանն ընդդեմ Թուրքիայի (որոշում), թիվ 46221/99, 2000թ. դեկտեմբերի 14, չտպագրված) ըստ Կառավարությունների՝ հանդիսանում է օտար հողում անձանց նկատմամբ ռազմական ուժերի կողմից այդպիսի իրավական իշխանության կամ իրավագործության իրականացման դասական օրինակ: Իրավագործությունը Խավարայի գործում, որը վերաբերում էր Իտալիայի ափից 35 ծովային մղոն հեռու իտալական ռազմածովային նավի կողմից Ալբանական նավին վիճարկվող միտումնավոր հարվածին (Խավարան և այլոք ընդդեմ Իտալիայի և Ալբանիայի(որոշում), թիվ 39473/98, 2001թ. հունվարի 11, չտպագրված), բաժանվել էր պատասխանող պետությունների միջև գրավոր համաձայնությամբ: Ըստ Կառավարությունների՝ իրավագործության իրենց մեկնաբանությունը բխում է նաև travaux preparatoires-ից և իրենց կողմից Կոնվենցիայի վավերացումից հետո դրա կիրառման պրակտիկայից: Այս վերջին առնչությամբ նրանք վկայակոչել են Կոնվենցիայի 15-րդ հոդվածով նախատեսված՝ պատերազմական գործողությունների դեպքում պարտավորություններից շեղմանը, որոնց մասնակցում է Բարձր պայմանավորվող կողմը՝ իր տարածքից դուրս:

38. Կառավարությունները եզրակացրել են, որ պարզ է, որ այն արարքը, որի դեմ բողոքում են դիմողները, չի կարելի նկարագրել որպես իրավական իշխանության կամ իրավասության իրականացում:

39. Ավելին, Կառավարությունները շարունակել են քննարկել դիմողների սկզբունքային պնդումները Կոնվենցիայի 1-ին հոդվածում նշված իրավագործության իմաստի վերաբերյալ, այն է, որ Կոնվենցիայի 1-ին հոդվածով սահմանված պաշտպանության պոզիտիվ պարտավորությունը կիրառելի է համամասնաբար իրականացված վերահսկողության նկատմամբ:

40. Նախ և առաջ, Կառավարությունները գտնում են, որ 1-ին հոդվածի տեքստը չի ապահովում այսպիսի մեկնաբանություն: Եթե նախագիծը կազմողները ցանկանային ամրագրել «պատճառահետևանքային» տեսակի պատասխանատվություն, որն արդյունավետ է, նրանք կարող էին ընդունել 1949թ. Ժնևի կոնվենցիաների (մեջբերված վերը՝ 25-րդ կետում) ձևակերպումներին համանման ձևակերպումներ: Ցանկացած դեպքում, դիմողների մեկնաբանությունը կփոխի և կբաժանի մասնակից պետությունների պոզիտիվ պարտավորությունը պաշտպանելու իրավագործության սուբյեկտիվ իրավունքն այն ձևով, որը երբևէ նախատեսված չի եղել Կոնվենցիայի 1-ն հոդվածով:

41. Երկրորդ, Կառավարությունները գտնում են, որ դիմողների կողմից 15-րդ հոդվածի վկայակոչումը՝ ի պաշտպանություն 1-ին հոդվածի իրենց լայն մեկնաբանության, սխալ է, և որ 15-րդ հոդվածը, փաստորեն, ամրագրում է Կառավարությունների սեփական դիրքորոշումը: Կառավարությունները վիճարկում են, որ Կոնվենցիայի 15-րդ հոդվածի կիրառման մեջ կամ տեքստում ոչինչ չկա ենթադրելու, որ, ինչպես սխալմամբ ենթադրում են դիմողները, 15-րդ հոդվածի 2-րդ կետը վերաբերում է «պատերազմին» կամ «հանրային արտակարգ իրավիճակների» դեպքերին՝ մասնակից պետությունների տարածքներից դուրս, ինչպես նաև ներսում: Համապատասխանաբար, 15-րդ հոդվածի 2-րդ կետը չի ամրապնդում Կոնվենցիայի 1-ն հոդվածի վերաբերյալ դիմողների լայն մեկնաբանությունը:

42. Երրորդ՝ ինչ վերաբերում է դիմողների տեսակետին, որ ՀԴՀ-ի քաղաքացիները կմնան առանց Կոնվենցիայով տրամադրվող պաշտպանության, Կառավարությունները վկայակոչում են, որ Հյուսիսային Կիպրոսի գործերում Թուրքիայի պատասխանատվության բացակայության ճանաչումն այդ տարածքի բնակիչներին կզրկեր Կոնվենցիայի իրավունքների պաշտպանությունից (տես, Լուիզիդուն ընդդեմ Թուրքիայի 1995թ. մարտի 23-ի վճիռը (նախնական առարկություններ), Շարքեր Ա, թիվ 310, Լուիզիդուն ընդդեմ Թուրքիայի 1996թ. դեկտեմբերի 18-ի վճիռը (ըստ էության), վճիռների և որոշումների ժողովածու, 1996-VI, թիվ 26, և Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի [GC], թիվ 25781/94, ՄԻԵԴ 2001թ.): Սույն գործում Կառավարությունները նշում են, որ ՀԴՀ-ն չի եղել և Կոնվենցիայի մասնակից պետություն չէ, և նրա բնակիչները չունեն Կոնվենցիայի համաձայն գոյություն ունեցող որևէ իրավունք:

43. Կառավարությունները պնդում են, որ դիմողների՝ էքստերիտորիալ իրավագործության «պատճառահետևանքային» տեսության վերաբերյալ պատմությունը կարող է ունենալ միջազգային լուրջ հետևանքներ: Նման տեսությունը, եթե դրան հավելվի որպես ՆԱՏՕ-ի անդամ՝ բոլոր պատասխանող պետությունների առանձին պատասխանատվության վերաբերյալ դիմողների պնդումը, լրջորեն կաղավաղի Կոնվենցիայի նպատակն ու սխեման: Մասնավորապես, այն կունենա լուրջ հետևանքներ միջազգային ռազմական հավաքական գործողությունների համար, քանի որ այն Դատարանին կվերապահի իրավասություն՝ վերահսկելու մասնակից պետությունների մասնակցությունը ողջ աշխարհում ծավալվող ռազմական առաքելություններին այն հանգամանքներում, երբ անհնարին կդառնա այդ պետությունների համար ապահովել Կոնվենցիայով նախատեսված ցանկացած իրավունք այդ տարածքների բնակիչների համար, և նույնիսկ այն դեպքերում, երբ մասնակից պետություններն ակտիվ մասնակցություն չեն ցուցաբերում համապատասխան գործողություններին: Արդյունքում՝ Կոնվենցիայի դիրքորոշումը, ըստ Կառավարությունների, կարող է պարունակել նշանակալի քայքայիչ վտանգ՝ զգալի խոչընդոտելով

պետությունների մասնակցությանը նման գործողություններին, և կարող է, ցանկացած դեպքում, հանգեցնել Կոնվենցիայի 15-րդ հոդվածի հիման վրա պարտավորություններից առավել շեղման: Ի հավելումն՝ նրանք նշել են միջազգային մարդասիրական իրավունքն ու ՅՄԲԴ-ն և վերջերս Միջազգային քրեական դատարանը («ՄԲԴ») կոչված են կարգավորելու հենց պետությունների նման գործողությունները:

44. Վերջապես, Կառավարությունները վիճարկել են նաև դիմողների այլընտրանքային դատողությունները Կոնվենցիայի 1-ին հոդվածով սահմանված՝ պետությունների պատասխանատվության մասին: Ինչ վերաբերում է նրանց փաստարկին՝ Բելգրադի օդային տարածքի նկատմամբ ՆԱՏՕ-ի ռազմական ուժերի կողմից վիճարկվող վերահսկողության առնչությամբ, Կառավարությունները ժխտում են նման վերահսկողությունը, և ցանկացած դեպքում առարկում են, որ նման վերահսկողությունը կարող է հավասարեցվել բնական և ընթացիկ տարածքային վերահսկողությանը, ինչպես որ նշվել է Յուլիսիային Կիպրոսի վերաբերյալ վերը մեջբերված վճռում, որին հետևել է արդյունավետ վերահսկողության կամ օրինական իշխանության իրականացումը: Այնուհետև Կառավարությունները համարում են, որ դիմողների՝ սույն գործի և Ստերինգի գործի համեմատությունն էականորեն թերի է (Ստերինգն ընդդեմ Միացյալ Թագավորության 1989թ. հուլիսի 7-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 161): Այդ ժամանակ պետք է կայացվեր պրն Ստերինգի համեման վերաբերյալ որոշում, որը կալանավորվել էր պատասխանող պետության տարածքում մի իրավիճակում, ինչն անձի նկատմամբ իրավական իշխանության դասական կիրառում է, ուն համար պետությունը կարող է երաշխավորել Կոնվենցիայով նախատեսված իրավունքների ամբողջությունը:

45. Ուստի Կառավարությունները պնդում են, որ դիմողները և նրանց մահացած ազգականները չեն գտնվում պատասխանող պետությունների իրավագործության ներքո, և որ նրանց զանգատը, հետևաբար, անհամատեղելի է *ratione personae* Կոնվենցիայի դրույթների հետ:

2. Դիմողների բացատրությունները

46. Դիմողները կարծում են, որ զանգատը *ratione loci* համատեղելի է Կոնվենցիայի դրույթների հետ, որովհետև իրենք RTS-ի ռմբակոծության արդյունքում հայտնվել են պատասխանող պետությունների իրավագործության ներքո: Մասնավորապես, նրանք պնդել են, որ «իրավագործություն» հասկացությունը կարող է որոշվել՝ կիրառելով վերը մեջբերված Լուիզիդուի վճռում (նախնական առարկություններ և ըստ էության) օգտագործված «արդյունավետ վերահսկողության» չափանիշն այնպես, որ Կոնվենցիայի 1-ին հոդվածով նախատեսված պոզիտիվ պարտավորության՝ Կոնվենցիայով նախատեսված իրավունքներն ապահովելու ծավալը համաչափ լինի փաստացիորեն իրականացված վերահսկողության աստիճանի հետ: Նրանք կարծում են, որ 1-ին հոդվածում իրավագործության այս մոտեցումը կտրամադրի կիրառելի չափանիշ, որը Դատարանը կարող է կիրառել համեմատելի հանգամանքներում հետագա զանգատների նկատմամբ:

47. Համապատասխանաբար, երբ, ինչպես վերը նշված Լուիզիդուի վճռում է (նախնական առարկություններ և ըստ էության), ընդունվել, որ թուրքական զինված ուժերն արդյունավետորեն վերահսկել են Յուլիսիային Կիպրոսը, համապատասխանաբար, պետք է ենթադրել, որ Թուրքիան պարտավոր է ապահովել Կոնվենցիայով նախատեսված բոլոր իրավունքներն այդ տարածքում:

Այնուամենայնիվ, երբ պատասխանող պետությունները նշանակետին հարվածում են իրենց տարածքից դուրս, նրանք պարտավորված չեն անել անհնարինը (ապահովել Կոնվենցիայով նախատեսված բոլոր իրավունքները), բայց պետք է պատասխանատու լինեն Կոնվենցիայով նախատեսված այն իրավունքների համար, որոնք իրենց վերահսկողության տակ են քննարկվող իրավիճակում:

48. Դիմողները պնդում են, որ այս մոտեցումը լիովին համապատասխանում է Կոնվենցիայի իրավագիտությանը և նրանք, մասնավորապես, հիմնվում են վերը մեջբերված Իսայիի, Խավարայի և Օջալանի գործերի ընդունելիության մասին որոշումների վրա, ինչպես նաև Իլասկայի գործի (Իլասկան ընդդեմ Մոլդովայի և Ռուսաստանի Դաշնության (որոշում), թիվ 487877/99 2001թ. հունիսի 4, չտպագրված) վրա: Նրանք համարում են նաև, որ այն համատեղելի է Մարդու իրավունքների միջամերիկյան հանձնաժողովի կողմից նույնաբնույթ արտահայտությունների մեկնաբանության հետ (Քորդի գործով զեկույցը, տես վերը՝ կետ 23):

Մեջբերելով Մարդու իրավունքների կոմիտեի մի գործ, նրանք պնդում են, որ Կոմիտեն հանգել է հաստատուն եզրակացությունների 1966թ. ՔՔԻԴ-ի 2-րդ հոդվածի 1-ին կետի և դրա կամընտիր արձանագրության 1-ին հոդվածի վերաբերյալ:

49. Այնուհետև նրանք առաջարկում են, որ «իրավագործություն» տերմինի իրենց ընկալումը պաշտպանություն է գտնում Կոնվենցիայի տեքստում ու կառուցվածքում և, մասնավորապես, 15-րդ հոդվածում: Նրանք վիճարկում են, որ 15-րդ հոդվածն իմաստագուրկ կդառնա, եթե այն չկիրառվի էքստերիտորիալ պատերազմների կամ արտակարգ իրավիճակների նկատմամբ: Պետությունը, հետևաբար, կարող է շեղվել իր պարտավորություններից՝ 15-րդ հոդվածի հիման վրա, որովհետև առանց այդ շեղման Կոնվենցիան կիրառվում է նույնիսկ նման հակամարտությունների ընթացքում:

50. Ինչ վերաբերում է Կառավարությունների կողմից travaux preparatoires –ի վկայակոչմանը, նրանք նշում են, որ սա հիմնական կամ որոշիչ ապացուցման աղբյուր չէ՝ Կոնվենցիայի 1-ին հոդվածում իրավագործության օգտագործմանը տրվող իմաստի առումով: Անշուշտ, նրանք նշում են, որ Կառավարությունների նշած «իրավական իշխանությունը» և «կառուցվածքային փոխհարաբերությունները» իրավագործության էական տարրեր են, բայց նշված չեն travaux preparatoires-ում:

51. Նրանք մերժում են Կառավարությունների այն պնդումը, որ 1-ին հոդվածի իրենց մեկնաբանությունը կարող է վտանգավոր զարգացում ունենալ: Սույն գործը ՄԱԿ-ի խաղաղապահ գործունեության ընթացքում տեղի ունեցած պատահարի կամ անփութության, կամ կոպիտ զինվորների մասին չէ: Այն ավելի շուտ վերաբերում է դիտավորյալ գործողության, որին հավանություն են տվել պատասխանող պետություններից յուրաքանչյուրը, և որն ի կատար է ածվել ըստ նախագծվածի: Իհարկե, դիմողները պնդում են, որ վտանգավոր կլինի պետության նմանատիպ գործողություններից բխող՝ Կոնվենցիայի խախտումների համար պետություններին պատասխանատու չհամարելը: Ընդգծելով կյանքի իրավունքի նշանակալիությունը և Կոնվենցիայի դերը՝ որպես եվրոպական հանրային կարգը պահպանելու միջոց, նրանք շեշտում են, որ պատասխանող պետություններին պատասխանատու չհամարելն այս դիմողներին կթողնի առանց պաշտպանության միջոցի և պատասխանող պետությունների զորքերին ազատություն կտա գործելու անպատիժ:

Առանձին անձինք չեն կարող գանգատ ներկայացնել ԱՄԴ, ՅՄՔԴ-ն որոշում է ընդունում անհատների պատասխանատվության վերաբերյալ լուրջ ռազմական հանցագործությունների դեպքում, իսկ ՄՔԴ-ն դեռևս հիմնված չէ:

52. Որպես այլընտրանք՝ դիմողները վիճարկում են, որ նկատի ունենալով օդային գործողությունների ծավալը և համեմատաբար քիչ օդային դժբախտ պատահարները, ՆԱՏՕ-ի կողմից օդային տարածքի վերահսկողությունը մոտավորապես նույնքան ամբողջական է, որքան Թուրքիայի կողմից Յուսիսային Կիպրոսի տարածքի վերահսկողությունը: Քանի որ այդ վերահսկողությունը սահմանափակ էր որոշակի շրջանակով (միայն օդային տարածքը), 1-ին հոդվածի պոզիտիվ պարտավորությունը կարող է մնանապես սահմանափակվել: Նրանք ենթադրում են, որ «արդյունավետ վերահսկողություն» և «իրավագործություն» տերմինները պետք է բավականաչափ ճկուն լինեն՝ հաշվի առնելու համար ժամանակակից դիպուկ ռուների առկայությունն ու օգտագործումը, որը թույլ է տալիս ճշգրիտ և ազդեցիկ էքստերիտորիալ գործողություն՝ առանց հետևակային զորքերի անհրաժեշտության: Նկատի ունենալով արդի առաջընթացը՝ օդային հարվածների և հետևակային զորքերի միջև տարբերության վկայակոչումն անհրաժեշտ է:

53. Որպես այլընտրանք՝ դիմողները համեմատում են սույն գործի հանգամանքները վերը մեջբերված Սոերինգի գործի հանգամանքների հետ, պնդելով, որ վիճարկվող գործողությունը, փաստորեն, RTS-ին հարվածելու և հրթիռ արձակելու վերաբերյալ նախորդ որոշումների էքստերիտորիալ ազդեցությունն է, և այդ որոշումները կայացվել են պատասխանող պետության կամ պետությունների տարածքում: Նրանք, հետևաբար, պնդում են, որ իրավագործությունը կարող է հաստատվել այն նույն պատճառներով, ինչպես որ Սոերինգի գործում:

3. Դատարանի գնահատականը

54. Դատարանը նշում է, որ դիմողների և պատասխանող պետությունների միջև իրական կապը վիճարկվող գործողությունն է, որը, որտեղ էլ որոշված լինի, կատարվել է, կամ հետևանքներ է ունեցել այդ պետությունների տարածքից դուրս («էքստերիտորիալ գործողություն»): Դատարանը կարծում է, որ, հետևաբար, քննության ենթակա էական հարցն այն է, թե արդյո՞ք դիմողները և նրանց մահացած ազգականները, էքստերիտորիալ գործողության արդյունքում, կարող են գտնվել պատասխանող պետությունների իրավագործության ներքո (Դրոզդը և Յանուսեկն ընդդեմ Ֆրանսիայի և Իսպանիայի 1992թ. հունիսի 26-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 240, կետ 91, վերը մեջբերված Լուիզիդուի վճիռները (նախնական առարկություններ և ըստ էության), համապատասխանաբար 64 և 56-րդ կետերը, և Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի վերը մեջբերված վճիռը, կետ 80):

(ա) Մեկնաբանման կիրառելի կանոններ

55. Դատարանը հիշեցնում է, որ Կոնվենցիան պետք է մեկնաբանել 1969թ. Վիեննայի կոնվենցիայում սահմանված կանոնների լույսի ներքո (Գոլդերն ընդդեմ Միացյալ Թագավորության 1975թ. փետրվարի 21-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 18, կետ 29):

56. Դատարանը, հետևաբար, կփորձի հստակեցնել «իրենց իրավագործության ներքո գտնվող» արտահայտության սովորական իմաստը՝ իր համատեքստում, և Կոնվենցիայի խնդիրների և նպատակի լույսի ներքո (1969թ. Վիեննայի

կոնվենցիայի 31-րդ հոդվածի 1-ին կետ և, ի թիվս այլ աղբյուրների, Ջոնսթոնը և այլոք ընդդեմ Իռլանդիայի 1986թ. դեկտեմբերի 18-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 112, կետ 51): Դատարանը պետք է նաև հաշվի առնի «պայմանագրի կիրառման ցանկացած հետագա պրակտիկա, որը համաձայնություն է ստեղծում կողմերի միջև դրա մեկնաբանման առնչությամբ» (1969թ. Վիեննայի կոնվենցիայի 31-րդ հոդվածի 3(բ) կետ և վերը մեջբերված Լուիզիդուի վճիռը (նախնական առարկություններ), կետ 73):

57. Ավելին, 31-րդ հոդվածի 3(գ) կետը ցույց է տալիս, որ պետք է հաշվի առնել «կողմերի միջև հարաբերությունների նկատմամբ կիրառելի միջազգային իրավունքի ցանկացած համապատասխան նորմ»: Ավելի ընդհանուր, Դատարանը կրկնում է, որ Կոնվենցիայի հիմքում ընկած սկզբունքները չի կարելի մեկնաբանել և կիրառել վակուումում: Դատարանը պետք է նաև հաշվի առնի միջազգային իրավունքի ցանկացած համապատասխան նորմ, երբ քննվում են իր իրավագործությանն առնչվող հարցեր և, հետևապես, որոշում են պետության պատասխանատվությունը միջազգային իրավունքի գերակայող սկզբունքներին համապատասխան, չնայած նա պետք է զգույշ լինի Կոնվենցիայի՝ որպես մարդու իրավունքների պայմանագրի (վերը մեջբերված Լուիզիդուի վճիռը (ըստ էության), կետեր 43 և 52) հատուկ բնույթի նկատմամբ: Կոնվենցիան պետք է մեկնաբանվի հնարավորինս համահունչ միջազգային իրավունքի այլ սկզբունքների հետ, որի մասն է այն կազմում (Ալ-Ադսանն ընդդեմ Միացյալ Թագավորության, [GC], թիվ 35763, կետ 60, կտպագրվի 2001թվականին ՄԻԵԴ-ում):

58. Դատարանը նաև կրկնել է, որ travaux preparatoires-ը կարելի է նաև հաշվի առնել 1969թ. Վիեննայի կոնվենցիայի 31-րդ հոդվածի կիրառման արդյունքում ցանկացած իմաստ հաղորդելու տեսանկյունից կամ իմաստ սահմանելու նպատակով, երբ 1969թ. Վիեննայի կոնվենցիայի 31-րդ հոդվածի հիման վրա իմաստի մեկնաբանությունը մնում է «անորոշ կամ խրթին», կամ հանգեցնում է այնպիսի արդյունքի, որը «ակնհայտորեն անհեթեթ է կամ ոչ ողջամիտ» (32-րդ հոդված): Դատարանը նաև նշել է 31 և 32-րդ հոդվածներում նշված՝ մեկնաբանման կանոնների միջև եղած փոխհարաբերության վերաբերյալ ՄԻԿ-ի մեկնաբանությունները (այդ հոդվածների տեքստը և ՄԻԿ-ի մեկնաբանությունների ամփոփումը ներկայացված է վերը՝ կետեր 16-18-ում):

(բ) «իրենց իրավագործության ներքո» բառերի իմաստը

59. Ինչ վերաբերում է Կոնվենցիայի 1-ին հոդվածում համապատասխան տերմինի «սովորական իմաստին», Դատարանն ընդունում է, որ միջազգային հանրային իրավունքի տեսանկյունից պետության իրավագործությունը գլխավորապես տարածքային է: Թեև միջազգային իրավունքը չի բացառում պետության իրավագործության էքստերիտորիալ իրականացումը, նման իրավագործության հիմքերը (ներառյալ քաղաքացիությունը, դրոշմ, դիվանագիտական և հյուպատոսական հարաբերությունները, օրենքների կիրառությունները, պաշտպանությունը, պասիվ անձը և համընդհանրությունը), որպես ընդհանուր կանոն, սահմանված և սահմանափակված են այլ համապատասխան պետությունների ինքնիշխան տարածքային իրավունքներով (Ման, «Իրավագործության ուսմունքը միջազգային իրավունքում», RdC, 1964, հատոր 1. Ման, «Իրավագործության ուսմունքը միջազգային իրավունքում քսան տարի անց», RdC, 1984, հատոր 1, Բերնհարդ, «Միջազգային հանրային իրավունքի հանրագիտարան», 1997թ. հրատարակություն, հատոր 3, էջեր 55-59, «Պետությունների իրավագործություն» և 1995թ. հրատարակություն, հատոր 2, էջեր 337-343.

Վարչական, դատական և օրենսդրական ակտերի էքստերիտորիալ ազդեցությունը, Օպենհեյմի միջազգային իրավունքը, 9-րդ հրատարակություն, 1992թ.(Ջենինգս և Վատս), հատոր 1, կետ 137. Փ.Ս.Դյուպու, «Միջազգային հանրային իրավունք», 4-րդ հրատարակություն, 1998թ. էջ 61, և Բրոնլի, «Միջազգային իրավունքի սկզբունքներ», 5-րդ հրատարակություն, 1998թ., էջեր 287,301 և 312-314):

60. Համապատասխանաբար, օրինակ, արտասահմանում իր քաղաքացիների նկատմամբ իրավազորություն իրականացնելու պետության իրավասությունն ստորադասելի է այդ պետության և այլ պետությունների տարածքային իրավասությանը (Հիգինս, Հիմնահարցեր և գործընթաց (1994թ.), էջ 73, և Նգուլեն Բվոք Դին, Միջազգային հանրային իրավունք, 6-րդ հրատարակություն, 1999 (Դայլեր և Պելե), էջ 500): Ի հավելումն՝ պետությունն իրականում չի կարող իրավազորություն իրականացնել այլ պետության տարածքում առանց վերջինիս թույլտվության, հրավերի կամ համաձայնության, եթե առաջինը նվաճող պետություն չէ, ինչի դեպքում այն կարող է այդ տարածքում իրավազորություն իրականացնել առնվազն որոշ դեպքերում (Բերնհարդ, վերը մեջբերված, հատոր 3, էջ 59 և հատոր 2, էջեր 338-340, Օպենհեյմ, վերը մեջբերված, կետ 137) Փ.Ս.Դյուպու, վերը մեջբերված, էջեր 64-65, Բրոնլի, վերը մեջբերված, էջ 313, Կասես, «Միջազգային իրավունք», 2001, էջ 89, և ավելի նոր՝ «Ձեկույց ազգային փոքրամասնությունների նկատմամբ իրենց ազգային պետությունների կողմից»՝ գերադասելի վերաբերմունքի մասին ընդունված Վենետիկի հանձնաժողովի 48-րդ լիազուճար նիստում, Վենետիկ, 2001թ. հոկտեմբերի 19-20):

61. Դատարանը, հետևաբար, այն կարծիքին է, որ Կոնվենցիայի 1-ին հոդվածը պետք է արտացոլի իրավազորության այս սովորական և էականորեն տարածքային ընկալումը, իրավազորության այլ հիմքերը բացառիկ են և պահանջում են հատուկ հիմնավորում յուրաքանչյուր գործի կոնկրետ հանգամանքներում (տես, *mutatis mutandis* և, ընդհանուր առմամբ), էքստերիտորիալ քրեական իրավազորության հարցերի փորձագետների ընտրովի կոմիտե, Հանցագործության հիմնահարցերի եվրոպական կոմիտե, Եվրոպայի խորհուրդ, «էքստերիտորիալ քրեական իրավազորություն», Ձեկույցը տպագրված է 1990թ., էջ 8-30):

62. Դատարանը գտնում է, որ Կոնվենցիայի կիրառման՝ պետությունների պրակտիկան դրա վավերացման օրվանից, վկայում է Մասնակից պետությունների կողմից ներկա գործին նման համատեքստում իրենց էքստերիտորիալ պատասխանատվությունը չըմբռնելու մասին: Չնայած Կոնվենցիայի վավերացումից ի վեր պայմանավորվող պետությունների մասնակցությամբ եղել են մի շարք ռազմական առաքելություններ, որոնց գործողությունները կրել են էքստերիտորիալ բնույթ (*inter alia*, Օոցում, Բոսնիայում և Հերցեգովինայում և ՀԴՀ-ում), ոչ մի պետություն չի եղել այն կարծիքի, որ իր էքստերիտորիալ գործողությունները ներառում են իրավազորության իրականացում Կոնվենցիայի 1-ին հոդվածի իմաստով, շեղում կատարելով Կոնվենցիայի 15-րդ հոդվածի համաձայն: Գոյություն ունեցող շեղումները կատարվել են Թուրքիայի և Սիացյալ Թագավորության կողմից՝ որոշակի ներքին բախումների առնչությամբ (համապատասխանաբար՝ Հարավ-արևելյան Թուրքիայում և Հյուսիսային Իռլանդիայում), և Դատարանը ոչ մի հիմք չի գտել ընդունելու համար դիմողների այն պնդումը, որ 15-րդ հոդվածը ընդգրկում է բոլոր «պատերազմական» և «հանրային արտակարգ» իրավիճակները՝ ընդհանրապես, անկախ այն բանից, թե՛ դրանք տեղի են ունեցել

պայմանավորվող պետության տարածքի սահմաններում, թե դրանցից դուրս: Իհարկե, 15-րդ հոդվածն ինքնին պետք է մեկնաբանվի ելնելով Կոնվենցիայի 1-ին հոդվածում նախատեսված «իրավագորության» սահմանափակումից:

63. Ի վերջո, Դատարանն իրավագորության այս հիմնականում տարածքային ընկալման հստակ հաստատումը գտել է travaux preparatoires-ում, որը ցույց է տալիս, որ Փորձագիտական միջկառավարական կոմիտեն «իրենց տարածքներում բնակվող յուրաքանչյուր անձ» բառերը փոխարինել է «իրենց իրավագորության ներքո գտնվող» անձանց վկայակոչմամբ՝ նպատակ ունենալով ծավալել Կոնվենցիայի կիրառման տարածումն այն անձանց նկատմամբ, ովքեր կարող է չբնակվեն, իրավական իմաստով, բայց ովքեր, այնուամենայնիվ, գտնվում են մասնակից որևէ պետության տարածքում (տես վերը՝ կետ 19):

64. Իրոք, Կոնվենցիայի գաղափարը, որն իրենից ներկայացնում է կենդանի փաստաթուղթ, ինչը պետք է մեկնաբանել ժամանակի պայմանների լույսի ներքո, հաստատականորեն արմատավորված է Դատարանի նախադեպային իրավունքում: Դատարանն այդ մոտեցումը կիրառել է ոչ միայն Կոնվենցիայի ինքնուրույն դրույթների նկատմամբ (օրինակ, վերը մեջբերված Ստերինգի վճիռը, կետ 102, Դուդոնն ընդդեմ Սիացյալ Թագավորության 1981թ. հոկտեմբերի 22-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 45, X,Y,Z-ն ընդդեմ Սիացյալ Թագավորության, 1997թ. ապրիլի 22-ի վճիռը, Ջեկույցներ, 1997-II), Վիեննան ընդդեմ Սիացյալ Թագավորության [GC], թիվ 24888/94, կետ 72, ՄԻԵԴ 1999-IX,և Մեթյուսն ընդդեմ Սիացյալ Թագավորության [GC],թիվ 24833/94, կետ 39, ՄԻԵԴ 1999-I), բայց ավելի հաճախ կիրառում է նախկին 25-րդ և 46-րդ հոդվածները մեկնաբանելու առնչությամբ, որոնք վերաբերում են մասնակից պետությունների կողմից Կոնվենցիայի մարմինների իրավասության ճանաչմանը (վերը մեջբերված Լուիզիդոյի վճիռը (նախնական առարկություններ), կետ 71): Նշված վերջին վճռում Դատարանը եզրակացրել է, որ Կոնվենցիայի նախկին 25-րդ և 46-րդ հոդվածները չի կարելի մեկնաբանել սոսկ դրանց հեղինակների մտադրություններին համապատասխան, որոնք արտահայտվել են ավելի քան 40 տարի առաջ, ըստ որի՝ նույնիսկ եթե հաստատվեր, որ խնդրո առարկա սահմանափակումները համարվել են թույլատրելի 25-րդ և 46-րդ հոդվածների համաձայն, երբ Կոնվենցիան ընդունվել է Պայմանավորվող կողմերի փոքրամասնությամբ, նման ապացույցը «չէր կարող վճռական լինել»:

65. Այնուամենայնիվ, սույն գործում խնդրո առարկա 1-ին հոդվածի շրջանակը վճռորոշ է Բարձր պայմանավորվող կողմերի պոզիտիվ պարտավորությունների շրջանակի համար և, որպես այդպիսին, մարդու իրավունքների պաշտպանության կոնվենցիոն համակարգի շրջանակների և հասանելիության համար՝ ի հակադրություն Լուիզիդոյի գործի (նախնական առարկություններ) քննարկումների հիման վրա, գործը քննելու՝ Կոնվենցիայի մարմինների իրավասության հարցին: Ամեն դեպքում, travaux preparatoires-ի վերը մանրամասնված հատվածները հստակ ցույց են տալիս Կոնվենցիայի 1-ին հոդվածի իմաստը, որը չի կարելի անտեսել: Դատարանն ընդգծում է, որ ինքը 1-ին հոդվածը չի մեկնաբանում «միայն» travaux preparatoires-ի համաձայն կամ travaux-ը «վճռական» չի համարում, ավելի շուտ այս նախապատրաստական նյութը կազմում է Կոնվենցիայի 1-ին հոդվածի սովորական իմաստը հաստատող ապացույց, ինչպես արդեն նշվել է Դատարանի կողմից (1969թ. Վիեննայի կոնվենցիայի 32-րդ հոդված):

66. Համապատասխանաբար, և ինչպես Դատարանը նշել է Ստերինգի գործում.

«1-ին հոդվածը սահմանում է սահմանափակում, հատկապես տարածքային, Կոնվենցիայի կիրառման առնչությամբ: Մասնավորապես, Պայմանավորվող

պետության ստանձնած պարտավորությունը սահմանափակված է թվարկված իրավունքներն ու ազատություններն իր «իրավագործության» ներքո գտնվող անձանց համար «ապահովելով» (“reconnaitre” ֆրանսերեն տեքստում): Այնուհետև Կոնվենցիան չի կարգավորում այն պետությունների գործողությունները, որոնք Կոնվենցիայի մասնակից չեն, ոչ էլ այն հավակնում է դառնալու միջոց, որը Պայմանավորվող պետություններից կպահանջի Կոնվենցիայի չափանիշները կիրառել այլ պետությունների նկատմամբ»:

(գ) Էքստերիտորիալ գործողությունները, որոնք ճանաչվել են որպես իրավագործության իրականացում

67. Պահպանելով իրավագործության էականորեն տարածքային ընկալումը, Դատարանը միայն բացառիկ դեպքերում է ընդունել, որ Պայմանավորվող պետությունների՝ իրենց տարածքներից դուրս կատարած գործողությունները կամ դրանց հետևանքները համարվեն իրենց իրավագործության իրականացում՝ Կոնվենցիայի 1-ին հոդվածի իմաստով:

68. Դատարանի նախադեպային իրավունքում՝ որպես պատասխանող պետության «պետական տարածքով չսահմանափակված» իրավագործության օրինակ (Լուիզիդոյի վճիռը (նախնական առարկություններ), կետ 62), վկայակոչվել են այն իրավիճակները, երբ Պայմանավորվող պետության կողմից անձի հանձնումը կամ արտաքսումը կարող է հանգեցնել հարցերի՝ 2-րդ և կամ 3-րդ հոդվածների հիման վրա (կամ, բացառիկ դեպքերում, 5-րդ և 6-րդ հոդվածների հիման վրա), և այդպիսով, Կոնվենցիայի հիման վրա ընդգրկեն այդ պետության պատասխանատվությունը (վերը նշված Ստերինգի գործը, կետ 91, Կրուզ Վարասը և այլոք ընդդեմ Շվեդիայի 1991թ. մարտի 20-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 201, կետ 69 և 70, և Վիլվարախասը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության 1991թ. հոկտեմբերի 30-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 215, կետ 103):

Այնուամենայնիվ, Դատարանը նկատում է, որ նման գործերում պատասխանատվությունն առաջանում է պատասխանող պետության այնպիսի գործողության արդյունքում, որը վերաբերում է անձին, քանի դեռ նա իր տարածքում է, հստակորեն իր իրավագործության ներքո, և նման գործերը չեն վերաբերում պետության իրավասության կամ իրավագործության իրական իրականացմանն արտասահմանում (տես նաև վերը մեջբերված Ալ-Ադսանի վճիռը, կետ 39):

69. Ի հավելումն՝ Լուիզիդոյի վճռի (նախնական առարկություններ) 62-րդ կետում նշված հետագա օրինակը Դրոզդի և Յանուսեկի գործն էր, որտեղ մեջ բերելով ընդունելիության մասին Հանձնաժողովի մի շարք որոշումներ, Դատարանն ընդունում է, որ մասնակից կողմերի (Ֆրանսիա և Իսպանիա) պատասխանատվությունն սկզբունքորեն կարող էր ճանաչվել իրենց իշխանությունների (դատավորների) գործողությունների պատճառով, որոնք ազդեցություն են ունեցել կամ կատարվել են իրենց սեփական տարածքից դուրս (վերը նշված Դրոզդի և Յանուսեկի վճիռը, կետ 91): Այդ գործում վիճարկվող գործողությունները չէին կարող այդ հանգամանքներում վերագրվել պատասխանող պետություններին, որովհետև տվյալ դատավորները չէին գործում ի պաշտոնե որպես Ֆրանսիայի կամ Իսպանիայի դատավորներ և որպես Անդորրայի դատարաններ, որոնք գործել են պատասխանող պետություններից անկախ:

70. Ավելին, Լուիզիոյի այդ առաջին վճռում (նախնական առարկություններ), Դատարանը գտել է, որ նկատի ունենալով Կոնվենցիայի խնդիրն ու նպատակը, Բարձր պայմանավորվող կողմի պատասխանատվությունը կարող էր ճանաչվել, երբ որպես պատերազմական գործողության հետևանք (օրինական կամ անօրինական) նա արդյունավետ վերահսկողություն է իրականացրել իր պետական տարածքից դուրս: Նման տարածքում Կոնվենցիայով սահմանված իրավունքներն ու ազատություններն ապահովելու պարտավորությունը, ըստ Դատարանի, բխել է նման վերահսկողության փաստից՝ անկախ նրանից, այն իրականացվել է ուղղակիորեն պատասխանող պետության զինված ուժերի միջոցով, թե՛ ենթակա տեղական վարչակազմի միջոցով: Դատարանը եզրակացրել է, որ դիմողի վիճարկած գործողությունները գտնվում էին թուրքիայի իրավագործության ներքո՝ Կոնվենցիայի 1-ին հոդվածի իմաստով:

Ըստ էության, Դատարանը գտել է, որ անհրաժեշտություն չկար որոշելու՝ արդյո՞ք թուրքիան իրականում իրականացրել է ամբողջական վերահսկողություն «Յյուսիսային Կիպրոսի Թուրքական Յանրապետության» («ՅԿԹՅ»-ի) իշխանությունների քաղաքականության և գործողությունների վրա: Յյուսիսային Կիպրոսում ակտիվ պարտականություններ իրականացնող զորքերի մեծաթիվ քանակից ակնհայտ էր, որ թուրքիայի զինված ուժերն իրականացնում են «արդյունավետ ամբողջական վերահսկողություն կղզու մի հատվածում»: Նման վերահսկողությունը համապատասխան ստուգման և գործի հանգամանքների համաձայն ճանաչվել է, որ հանգեցրել է թուրքիայի պատասխանատվության «ՅԿԹՅ» քաղաքականության և գործողությունների համար: Դատարանը եզրակացրել է, որ նման քաղաքականությունից կամ գործողություններից ազդեցություն կրողները, այդպիսով, գտնվում են թուրքիայի «իրավագործության» ներքո՝ Կոնվենցիայի 1-ին հոդվածի իմաստով: Կոնվենցիայով սահմանված իրավունքները և ազատությունները ապահովելու թուրքիայի պարտականությունը, այդպիսով, ընդունվել է, որ տարածվում է Յյուսիսային Կիպրոսի վրա: Իր հետագա՝ Կիպրոսն ընդդեմ թուրքիայի վճռում (մեջբերված է վերը), Դատարանը հավելել է՝ քանի որ թուրքիան ուներ նման «արդյունավետ վերահսկողություն», նրա պատասխանատվությունը չի կարող սահմանափակվել իր սեփական ներկայացուցիչների գործողություններով, այլ ընդգրկում է նաև տեղական վարչակազմի գործողությունները, որը գոյատևում է թուրքական աջակցության շնորհիվ: 1-ին հոդվածով սահմանված՝ թուրքիայի «իրավագործությունը», այսպիսով, համարվում է, որ տարածվում է Կոնվենցիայի իրավունքները ողջ կազմով Յյուսիսային Կիպրոսում, ապահովելու նկատմամբ:

71. Արդյունքում, Դատարանի նախադեպային իրավունքը ցույց է տալիս, որ Մասնակից պետության կողմից էքստերիտորիալ իրավագործության իրականացման ճանաչումն իր կողմից բացառիկ է. նման ճանաչումը գործում է, երբ պատասխանող պետությունը, ռազմական գրավման հետևանքով համապատասխան տարածքի և արտերկրում իր բնակիչների նկատմամբ վերահսկողության միջոցով կամ այդ տարածքի Կառավարության համաձայնության, հրավերի կամ լուռ համաձայնության միջոցով, իրականացնում է հանրային իշխանությունը՝ ամբողջությամբ, կամ մասնակիորեն, որը բնականոն կերպով պետք է իրականացնի այդ պետությունը:

72. Այս մոտեցմանը զուգահեռ, Դատարանը վերջերս գտել է, որ պետության մասնակցությունն իր պաշտպանությանը այլ պետությունում իր դեմ հարուցված գործում՝ չի հանդիսանում էքստերիտորիալ իրավագործության իրականացում (Մըք Էլինեյն ընդդեմ Իռլանդիայի և Միացյալ Թագավորության (որոշում), թիվ 31253/96,

էջ 7, 2000թ. փետրվարի 9, չտպագրված): Դատարանն ասել է. «Քանի որ դիմողը բողոքել է 6-րդ հոդվածի հիման վրա... Իռլանդիայում ընթացող դատավարություններում Միացյալ Թագավորության կառավարության ընդունած դիրքորոշման կապակցությամբ Դատարանն անհրաժեշտ չի համարում վերացականորեն հասցեագրել այն հարցը, թե արդյո՞ք Կառավարության՝ այլ Պայմանավորվող պետությունների դատարաններում որպես կողմի գործողությունները կարող են 6-րդ հոդվածի հիման վրա հանգեցնել պատասխանատվության... Դատարանը կարծում է, որ գործի մասնավոր հանգամանքներում այն փաստը, որ Միացյալ Թագավորության կառավարությունը իռլանդական դատարաններում բարձրացրել է ինքնիշխան անձեռնմխելիության պաշտպանության հարցը, ուր դիմողը որոշել էր դատական գործ հարուցել, բավարար չէ նրան՝ Կոնվենցիայի 1-ին հոդվածի իմաստով որպես Միացյալ Թագավորության իրավագործության ներքո գտնվող դիտելու համար:

73. Ի հավելումն՝ Դատարանը նկատում է, որ պետության կողմից էքստերիտորիալ իրավագործության իրականացման այլ ճանաչված իրավիճակները ներառում են այն դեպքերը, որոնք վերաբերում են արտասահմանում, ինչպես նաև տվյալ պետության դրոշի տակ թռչող և նավարկող կամ գրանցված օդային և ծովային տրանսպորտում իրենց դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցիչների գործողություններին: Այս առանձնահատուկ իրավիճակներում, միջազգային սովորութային իրավունքը և պայմանագրային դրույթները ճանաչել են համապատասխան պետության էքստերիտորիալ իրավագործության իրականացումը:

(դ) Հետևաբար, արդյո՞ք սույն դիմողները համարվում են պատասխանող պետության «իրավագործության» ներքո գտնվողներ:

74. Դիմողները պնդում են, որ RTS-ի ռմբակոծումը պատասխանող պետությունների կողմից էքստերիտորիալ գործողության մեկ այլ օրինակ է, որը կարող է ընդգրկվել Կոնվենցիայի 1-ին հոդվածում «իրավագործության» ընկալման մեջ, և, հետևաբար, առաջարկում են Կոնվենցիայի 1-ին հոդվածում «իրավագործություն» հասկացության սովորական իմաստի հետագա մանրամասնում: Դատարանը պետք է ընդունի, որ սույն գործում առկա են հավասարապես բացառիկ հանգամանքներ, ինչը հավասարազոր կլինի Պայմանավորվող պետության կողմից էքստերիտորիալ իրավագործության իրականացմանը:

75. Նախ և առաջ, դիմողներն առաջարկում են Հյուսիսային Կիպրոսի գործերում զարգացրած «արդյունավետ վերահսկողության» չափանիշների կիրառում: Նրանք գտնում են, որ 1-ին հոդվածով նախատեսված պոզիտիվ պարտավորությունը՝ Կոնվենցիայով նախատեսված իրավունքներն ապահովելու առումով, տարածվում է տվյալ էքստերիտորիալ իրադրությունում իրականացվող վերահսկողության մակարդակին՝ համամասնորեն: Կառավարությունները պնդում են, որ սա նշանակում է իրավագործության «պատճառահետևանքային» ընկալում, ինչը չի բխում Կոնվենցիայի 1-ին հոդվածից, կամ դրան չի համապատասխանում: Դատարանը կարծում է, որ դիմողների բացատրությունները հավասարազոր են այն պնդմանը, որ Պայմանավորվող պետությանը վերագրվող գործողությունից ազդեցություն կրած յուրաքանչյուր ոք, անկախ այն բանից, թե աշխարհի որ

մասուն է այդ գործողությունը կատարվել կամ հետևանքներ առաջացրել, գտնվում է այդ պետության իրավագործության ներքո՝ Կոնվենցիայի 1-ին հոդվածի իմաստով:

Դատարանը հակված է համաձայնելու Կառավարությունների այն բացատրություններին, որ 1-ին հոդվածի տեքստը «իրավագործության» այսպիսի մոտեցում չի բովանդակում: Ակնհայտորեն, դիմողներն ընդունում են, որ իրավագործությունը և դրան հետևող՝ ցանկացած պետության՝ Կոնվենցիայով նախատեսված պատասխանատվություն կսահմանափակվի տվյալ մասնավոր գործողության կատարման և հետևանքների հանգամանքներով: Այնուամենայնիվ, Դատարանն այն կարծիքին է, որ 1-ին հոդվածի տեքստը չի ապահովում ոչ մի հիմնավորում դիմողների պնդման համար, ըստ որի 1-ին հոդվածում առկա պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել «այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են սույն Կոնվենցիայի I բաժնում» կարելի է բաժանել և ձևափոխել տվյալ էքստերիտորիալ գործողության մասնավոր հանգամանքներին համապատասխան, և Դատարանը կարծում է, որ այս կապակցությամբ իր դիրքորոշումը պաշտպանված է Կոնվենցիայի 19-րդ հոդվածի տեքստով: Անշուշտ, դիմողների մոտեցումը չի բացատրում 1-ին հոդվածում «իրավագործության ներքո գտնվող» բառերի կիրառումը, և նույնիսկ այնքան հեռուն է գնում, որ այս բառերը համարում է անտեղի և որևէ նպատակից զուրկ: Եթե Կոնվենցիայի նախագծողները ցանկանային նախատեսել իրավագործությունն այնպես ընդարձակորեն, ինչպես պնդում են դիմողները, նրանք այն կընդունեին 1949թ. ժնևի չորս կոնվենցիաների (տես վերը՝ կետ 25) 1-ին հոդվածին նմանատիպ կամ նույն տեքստը:

Այնուհետև դիմողների՝ իրավագործության հարցի ըմբռնումը՝ թե արդյո՞ք անձը գտնվում է Պայմանավորվող պետության իրավագործության ներքո, հավասարեցնում է այն հարցի հետ, թե արդյո՞ք այդ անձը կարող է Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների խախտման զոհ համարվել: Սրանք ընդունելիության առանձին և տարբեր պայմաններ են, որոնցից յուրաքանչյուրը պետք է բավարարվի նշված հերթականությամբ, մինչև անձը կկարողանա հիմնվել Կոնվենցիայի դրույթների վրա՝ Պայմանավորվող պետությունների դեմ հանդես գալուց:

76. Երկրորդ, դիմողների այլընտրանքային պնդումն այն է, որ օդային տարածքի վերահսկողության սահմանափակ շրջանակը սահմանափակում է միայն պատասխանող պետության պոզիտիվ պարտականության շրջանակները՝ պաշտպանելու դիմողներին, և չի բացառում դա: Դատարանը սա համարում է ըստ էության նույն փաստարկը, ինչպիսին որ նրանց սկզբունքային պնդումն է, և մերժում է նույն հիմնավորմամբ:

77. Երրորդ, դիմողները որպես պատասխանող պետությունների իրավագործությունը հիմնավորող հաջորդ այլընտրանքային փաստարկ՝ հիմնվում են Սոերինգի գործի (վերը մեջբերված) հետ համեմատության վրա: Դատարանը սա համոզիչ չի համարում՝ ելնելով այդ և սույն գործի միջև հիմնարար տարբերություններից, ինչպես արդեն նշվել է վերը՝ 68-րդ կետում:

78. Չորրորդ, Դատարանն անհրաժեշտ չի համարում արտահայտվել դիմողների վկայակոչած միջազգային փաստաթղթերում տարբեր համատեքստերում ենթադրաբար նույնանման իրավագործության վերաբերյալ դրույթների հատուկ իմաստի կապակցությամբ, քանի որ Դատարանի համար համոզիչ չեն այս առնչությամբ դիմողների կոնկրետ բացատրությունները (տես վերը՝ կետ 48): Նա նշում է, որ 1948թ. Մարդու իրավունքների և

պարտականությունների ամերիկյան հռչակագրի 2-րդ հոդվածը՝ վկայակոչված վերոհիշյալ Քորդի գործով Մարդու իրավունքների միջամերիկյան հանձնաժողովի զեկույցում (կետ 23), չի պարունակում իրավագործության ոչ մի որոշակի սահմանափակում: Ի հավելումն, ինչ վերաբերում է 1966թ. ՔՔԻԴ 2-րդ հոդվածի 1-ին կետին (տես վերը՝ կետ 26), դեռևս 1950թ. նախագծողները որոշակիորեն և հստակորեն սահմանել են դրա տարածքային շրջանակը, և շատ դժվար է պնդել, որ Մարդու իրավունքների կոմիտեի կողմից որոշակի դեպքերում էքստերիտորիալ իրավագործության բացառիկ ճանաչումը (դիմողները բերում են միայն մեկ օրինակ) որևէ ձևով փոխարինում է ՔՔԻԴ-ի այդ հոդվածով որոշակիորեն նախատեսված տարածքային իրավագործությանը կամ բացատրում է 1966թ. իր կամընտիր արձանագրության 1-ին հոդվածում «իրավագործության» ճշգրիտ իմաստը (տես վերը՝ կետ 27): Թեև 1978թ. Մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիայի 1-ին հոդվածի տեքստը (տես վերը՝ կետ 24) բովանդակում է եվրոպական կոնվենցիային նման՝ իրավագործության պայման, դիմողների կողմից նախկին դրույթների վերաբերյալ համապատասխան ոչ մի նախադեպային իրավունք չի մեջբերվել Դատարանում:

79. Հինգերորդ, և ավելի ընդհանուր, դիմողները պնդում են, որ եթե չընդունվի, որ իրենք գտնվում են պատասխանող պետությունների իրավագործության ներքո, դրանով կվտանգվի Կոնվենցիայի *ordre public* առաքելությունը և ցավալի դատարկություն կառաջացնի մարդու իրավունքների պաշտպանության կոնվենցիոն համակարգում:

80. Այս կապակցությամբ Դատարանի պարտականությունն է հաշվի առնել Կոնվենցիայի առանձնահատուկ բնույթը՝ որպես անհատների պաշտպանությանը կոչված եվրոպական հասարակական կարգի սահմանադրական փաստաթուղթ և դրա դերը, և ապահովել Պայմանավորվող կողմերի ստանձնած պարտավորությունների կատարումը, ինչպես նախատեսված է Կոնվենցիայի 19-րդ հոդվածում (վերը նշված Լուիզիոյի վճիռը (նախնական առարկություններ), կետ 93): Այդ իսկ պատճառով դժվար է ենթադրել, որ պատասխանող պետությունների էքստերիտորիալ իրավագործությունը չճանաչելը կխաթարի Կոնվենցիայի *ordre public* առաքելությունը, որն ինքնին ընդգծում է Կոնվենցիայի համակարգի բացառիկորեն տարածաշրջանային թեքումը, կամ էլ Կոնվենցիայի 19-րդ հոդվածը, որը որևէ որոշակի լույս չի սփռում այդ համակարգի տարածքային ոլորտի վրա:

Ճշմարիտ է, որ վերը հիշատակված՝ Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի վճռում (կետ 78) Դատարանը գիտակցում էր, որ անհրաժեշտ է խուսափել Հյուսիսային Կիպրոսում «մարդու իրավունքների պաշտպանության համակարգում ցավալի վակուումից»: Այնուամենայնիվ, և ինչպես նշել են Կառավարությունները, այդ մոտեցումը վերաբերում է սույն գործից բոլորովին տարբեր այլ իրավիճակի. Հյուսիսային Կիպրոսի բնակիչները կզրկվեին Կոնվենցիայի պաշտպանությունից և համակարգից, որոնցից իրենք նախկինում օգտվել էին, Թուրքիայի կողմից այդ տարածքի «արդյունավետ վերահսկողության» և դրանից բխող՝ Կիպրոսյան կառավարության՝ որպես Պայմանավորվող պետություն, կողմից Կոնվենցիայով ստանձնած պարտականությունների կատարման անկարողության արդյունքում:

Կարճ ասած, Կոնվենցիան բազմակողմանի պայմանագիր է, որը Կոնվենցիայի 56-րդ հոդվածին համապատասխան գործում է էականորեն տարածաշրջանային համատեքստում և նշանակալիորեն՝ պայմանավորվող պետությունների

իրավական դաշտում (espace juridique): ՀԴՀ-ն հստակորեն չի գտնվում այս իրավական դաշտում: Կոնվենցիան նախատեսված չէ կիրառելու աշխարհի մասշտաբով, նույնիսկ՝ Պայմանավորվող պետությունների վարքագծի առնչությամբ: Համապատասխանաբար, մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում առկա բացից կամ վակուումից խուսափելու ցանկությամբ է առաջնորդվել Դատարանը՝ իրավագործության առկայությունը ճանաչելով միայն այն դեպքում, երբ տվյալ տարածքը, բացառությամբ առանձնահատուկ հանգամանքների, կգտնվեր Կոնվենցիայի իրավասության շրջանակներում:

81. Վերջապես, դիմողները մասնավորապես հիմնվում են Դատարանի վերոհիշյալ Իսայի և Օջալանի գործերի ընդունելիության որոշումների վրա: Շճմարիտ է, որ Դատարանն այս երկու գործերն ընդունելի է հայտարարել, և դրանք ներառում էին Թուրքիայի տարածքից դուրս թուրքական ներկայացուցիչների՝ վիճարկվող գործողությունների մասին որոշակի գանգատներ: Այնուամենայնիվ, այս գործերից ոչ մեկում պատասխանող պետությունը չի բարձրացրել իրավագործության հարց, կամ նման հարց չի քննարկվում ընդունելիության մասին որոշումներում, և ցանկացած դեպքում այդ գործերն ըստ էության դեռ լուծված չեն: Նմանապես իրավագործության ոչ մի հերքում չի գրանցվել Խավարայի գործն անընդունելի համարած որոշման մեջ, որը դիմողները նույնպես վկայակոչել են (մեջբերված է վերը), ամեն դեպքում, դիմողները չեն վիճարկում Կառավարությունների վկայության այն մասը, որ Ալբանիայի և Իտալիայի միջև իրավագործությունը բաժանվել է ըստ նախնական գրավոր համաձայնության: Իլասկուի գործը, որի վրա նույնպես հիմնվել են դիմողները և մեջբերվել է վերը, վերաբերում է այն հայտարարություններին, որ ռուսական զորքերը վերահսկում են Մոլդովայի տարածքի մի մասը, մի հարց, որը վերջնականապես կորոշվի գործն ըստ էության քննելիս: Համապատասխանաբար, այս գործերը ոչ մի հիմնավորում չեն ապահովում դիմողների մեկնաբանության համար՝ Կոնվենցիայի 1-ին հոդվածի իմաստով մասնակից պետությունների իրավագործության վերաբերյալ:

4. Դատարանի եզրակացությունը.

82. Այսպիսով, Դատարանը համոզված չէ, որ որևէ իրավաբանական կապ է եղել բողոքարկվող գործողության զոհ անձանց և պատասխանող պետությունների միջև: Համապատասխանաբար, Դատարանը համոզված չէ, որ դիմողները և նրանց մահացած ազգականները կարող են գտնվել պատասխանող պետությունների իրավագործության ներքո՝ կապված տվյալ վիճարկվող էքստերիտորիալ գործողության հետ:

Բ. Ընդունելիության մնացած հարցերը

83. Վերոհիշյալ եզրակացության լույսի ներքո՝ Դատարանը որոշում է, որ անհրաժեշտություն չկա քննելու գանգատի ընդունելիության վերաբերյալ կողմերի մնացած բացատրությունները: Այդ հարցերն ընդգրկում են պատասխանող պետությունների որոշակի վիճարկվող պատասխանատվությունն այն գործողության համար, ինչը կատարել է միջազգային այն կազմակերպությունը, որի անդամ են, որոնց պարագայում արդյունավետ պաշտպանության միջոցները՝

Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով, դիմողների կողմից սպառված լինելու հարցը Դատարանը իրավասու է քննության առնելու վերը նշված ԱՄԴ-ի «Դրամական ոսկի» վճռում հաստատված սկզբունքներով:

Գ. Անփոփում և եզրակացություն

84. Համապատասխանաբար, Դատարանը եզրակացնում է, որ պատասխանող պետությունների վիճարկվող գործողությունը չի հանգեցնում նրանց՝ Կոնվենցիայով նախատեսված պատասխանատվության, և, հետևաբար, անհրաժեշտություն չկա քննարկելու կողմերի բարձրացրած ընդունելիության մյուս հարցերը:

85. Հետևաբար, զանգատը պետք է հայտարարվի անհամատեղելի Կոնվենցիայի դրույթների հետ և, որպես այդպիսին, անընդունելի՝ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն: Այս հիմքերով Դատարանը միաձայն **հայտարարում է** զանգատն անընդունելի:

Փոլ Սահոնեյ

Քարտուղար

Լուզիուս Վիլդհաբեր

Նախագահ